ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆ

ԼՐԱՏՎՈՒԹՅԱՆ ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆ

ՀՀ, 0015, ք. Երևան, Արգիշտի 1 **հեռ. +(374 11) 514-240**

№ Հ/779
12-09-2022

«Հետաքննող լրագրողներ» ՀԿ լրագրող Տիրայր Մուրադյանին

Հարգելի պարոն Մուրադյան,
ի պատասխան Ձեր հարցման՝ Երևան քաղաքի Կենտրոն վարչական շրջանի, Աբովյան փողոցի հ.1/1 շենքի հ.23 բնակարանի բնակչուհի Էռնա Ղուկասյանի կողմից բարձրացված հարցերի վերաբերյալ, աշխատակազմի քաղաքաշինության և հողի վերահսկողության վարչությունից տեղեկացնում են, որ դեռևս 12.07.2022թ. քաղ. Էռնա Ղուկասյանի կողմից Երևանի քաղաքապետին հասցեագրված դիմումի հիման վրա, Երևանի Կենտրոն վարչական շրջանի ղեկավարի աշխատակազմի կողմից ուսումնասիրվել են դիմումում բարձրացված հարցերը, որոնց արդյունքում վերջինիս տրվել է պատասխան և առաջարկվել է բարձրացված հարցերը քննարկել «Հայէկոնոմբանկ» ԲԲԸ-ի հետ կամ համաձայնություն ձեռք չբերելու դեպքում՝ հարցի կարգավորման համար դիմել դատարան, քանի որ բարձրացված հարցերը, ինչպես նշել է նաև դիմումատուն, ունեն տարիների վաղեմություն: Ըստ այդմ, դրանց վերաբերյալ վարչարարություն իրականացնելու և համապատասխան վարչական իրավախախտման արձանագրություն կազմելու ժամկետները անցել են, բացի այդ, դիմումում նշված հարցը վերաբերում է սեփականության իրավունքով գրանցված գույքի վրա իրականացված կառուցապատման հետևանքով պատճառված անհարմարություններին, հետևաբար, օրենքով սահմանված կարգով, նմանատիպ վեճերը ենթակա են լուծման՝ սեփականատերերի փոխադարձ համաձայնությամբ կամ դրանք ձեռք չբերելու դեպքում՝ դատական կարգով: Նաև նշենք, որ Երևանի քաղաքապետը նմանատիպ դեպքերում իրավական ակտ (քանդման որոշում) ընդունելու լիազորություն չունի: Ինչ վերաբերում է Երևանի քաղաքապետարանի կողմից նշված շենքի վթայրայնությունը ստուգելուն, ապա նշենք, որ վթարայնության աստիճան ստուգող կառուցվածքային ստորաբաժանում Երևանի քաղաքապետարանը չունի, այդ գործընթացը իրականացվում է ոլորտի (արտոնագրված) լիցենզավորված կազմակերպությունների կողմից: